

Տարեկան գինը 10 ռուբլի. կէս տարեկան 6 ռուբ.
Առանձին համարները 5 կոպէկով.

Թիֆլիսում գրվում են միմիայն խմբագրատան մէջ.

Մեր հասցէն. Тифлисъ, Редакция «Мшакъ»,
Կամ Tiflis, Rédaction «Mschak»,
Տէլէֆօն № 253.

ՄՇԱԿ

ՀԻՄՆԱԳԻՐ ԳԻՐԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

Խմբագրութիւնը բաց է առաւօտեան 10—2 ժամ
(բացի կիրակի եւ տօն օրերէն).

Յայտարարութիւն ընդունվում է ամէն լեզուով.

Յայտարարութիւնների համար վճարում են
իւրաքանչիւր բառին 2 կոպէկ.
Տէլէֆօն № 253.

ԹԱԳՈՒՅԻ ԳԱՐԻԵԼԵԱՆ ՓԱՆՈՍԵԱՆ

Երկարատեւ հիւանդութիւնից յետոյ վախճանովեց. ցաւօք սրտի յայտնելով այդ մասին, հանգուցեալի քորերը՝ տիկին Նատալիա Բէլազեան եւ Թաթլէ Դաւթեանց խնդրում են իրանց ազգականներին եւ ծանօթներին շնորհ բերել յուղարկաւորութեանը, որ տեղի կունենայ կիրակի, ամսիս 28-ին, առաւօտեան 10 ժամին, հանգուցեալի բնակարանից, որ գտնվում է Միքայէլեան եւ Սիմօնեան փողոցների անկիւնում, դէպի Ջորաշէնի եկեղեցին եւ այնտեղից Խօշիվանքի հանգստարանը:

3—3

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Ներքին ՏԵՍՈՒԹԻՒՆ. Կերակնօրեայ զրոյց. կինը սեփականութիւն չէ. Մատենագրութիւն. ներքին լուրեր.—ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Արտաքին լուրեր.—ԽԱՌԻ ԼՈՒՐԵՐ. Մանրա-նկար.—ՀԵՌԱԳԻՐԻՆ.—ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ. Ներք.—ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ. Վերջին մարդը եւ վերջին սեւ-փողը.

ԿԻՐԱԿԻՈՐԵԱՅ ԶՐՈՅՑ

Միշտ մի չար ոգի գալիս է խանգարելու մեր գեղեցիկ տրամադրութիւնը: Եւ մտադիր էի այսօրվայ զրոյցը սկսել ուրախալի խօսքե-րով: Ի՞նչպէս չուրախանալ, երբ Ալեքսանդրօ-պօլը, Երեւանը, Շուշին տօներ էին կառա-րում, հիացած ու ժպտուն էին: Ամեն անգամ մենք գաւառներից միայն արտունջի, գանգա-նների, լացի ձայն էինք լսում: Վերջապէս տե-սանք, որ այդ լալիաններն էլ ուրախանալու ընդունակութիւն են ունեցել: Կամենում էի ես էլ ուրախակից լինել նրանց, բայց...

Եկաւ Բագուի աղէտը: Հարիւրաւոր զոհեր,

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ՎԵՐՋԻՆ ՄԱՐԴԻ ԵՒ ՎԵՐՋԻՆ ՍԵՒՓՈՂԸ

(Յ Ր Ա Ղ)

Պատուհանի մօտ նստած՝ լրագիր էի կար-դում:

Մի անոյ թմրութիւն եկաւ վրաս. փոքր առ-փոքր թուլացաւ ձեռքս, վայր գցեցի թերթը եւ, ծանրացած գլուխս լուսամուտի շրջանակի վրա դրած, քնով անցայ:

Մի երազ տեսայ եւ. տարօրինակ, սարսա-փելի երազ:

Անա պատմեմ ձեզ:

Բարձր երկնքում, ծիրանագոյն ամպերի դա-գաթին, յաղթական ձեւով բազմել էր սատա-նան:

Նստած էի եւ ես նրա կողքին:

Փչում էր սաստիկ քամի: Երկնքից զոյգում էի եւ: Ինձ թւում էր, թէ անս—տան քամին պիտի խլէ ինձ այս անսահման բարձրութիւնից եւ մի լարդի շիւղի նման չարտէ ներքեւ՝ ան-դունդը: Ժողովելով բոլոր ոյժերս՝ ես մի կերպ զաշկուզեցի մի կտոր ամպի ծայրից եւ ապա—տանվեցի իմ հսկայ զբաղու ոտների տակ:

—Նայիր դէպի ցած, ընդմիջեց ստաւանս մեր լուծութիւնը:

Նոյն րօպէին իմ աչքերը ընդունեցին գեր-բնական փայլ: Երկրից, որ մինչ այն ներկայա-նում էր իբրեւ անշարժ, անթափանցիկ թանձր մառախուղով պատած մի մարմին, կենդանացաւ յանկարծ, ներկվեց պայծառ—կարմիր գոյնով եւ ես առաջին իսկ հայեացքից կարողացայ թափանցել նրան մի բնութից մինչեւ միւրը:

Ամեն ինչ պարզվեց ինձ համար:

Եւ տեսնում էի—ինչպէս էր թփերի վրա պտուղներ թրթռում, ինչպէս էին խմբվել մի կաթիլ անձրեւայրի մէջ անթիւ ինֆուզո-րիաներ, տեսնում էի եւ ովկիանոսի յատակում զարնուրեղի հրէշներ, տեսնում էի, ի հարկէ, նաեւ մարդ կոչված արարածներին, նոյնպէս եւ սրանց իւրաքանչիւր շարժումը:

այրված, մոխիր դարձած բնակարաններ, երկն-քի տակ մնացել են անտուն, անտէր մարդիկ, սովի եւ քաղցի մատնված: Շարունակեց սարսափների նկարագրութիւնը.—Ո՛չ: Շատ բան դեռ լաւ յայտնի չէ, շատ բան մեզ չէ հա-սել: Բայց բաւական է, որ զոհերը բանուոր մարդիկ են. բաւական է, այո՛, միայն այս հանգամանքը:

Բագուի այդ զոհերը կրկնապատիկ թշուառ են: Դրանք երկարաշարժից փնտրված ախաբա-լաքցիները չեն, ոչ էլ Չէլթեանի հրկիզեալները կամ Մուշկի սովեակները... Ո՛չ, բագուցի բան-ուորը զոհութեան մէջ կալ մի վերին աստիճանի տրագիկական հանգամանք:

Անա ինչպէս:

Աղէտի մանրամասնութիւնները «Մշակի» մէջ տպագրվելուց յետոյ, հանդիպում եմ ծա-նօթներին: Եւ ինչ եմ իմանում: Եղել են բա-րեւիրտ մարդիկ, որոնք կամեցել են իրանց լուսման ուղարկել մերկ ու անօգնական հրկի-զեալներին, բայց չըջապատողները ասել են. «Չարժէ. Բագուում միլիոնատէրեր կան եւ նը-րանցից իւրաքանչիւրի համար հանաքի պէս

Բացի տեսողութիւնից նրբացան եւ միւս զգայարաններս:

Եւ լսում էի անթիւ, անհամար ձայներ, որոնք հասնում էին երկրից իմ ականջին պարզ, որոյ, առանց մէկը միւսի հետ խառնվելու. ես լսում էի շատ լաւ եւ մեղուի բղղոցը, եւ գինուորական երաժշտութիւնը, եւ պարամէն-տում, բարձր խորհուրդներում արտասանվող ճառերը, եւ նորահարսի մետաքսեայ հագուստի խլիչոցը...

Մարդիկ ետում էին երկրաջրի վրա, ինչ-պէս գետուններ՝ դաշտի մէջ ընկած եւ արդէն փտութեան հասած պտղահատի չուրջը: Նրանք աշխատում էին տեսնելու եւսանդով, խոնավում էին միմեանց, չողողալով խառնում էին մի-մեանց, կուռում, ծնծում, սպանում էին, իրար միս էին ուտում...

Ժամանակը սլանում էր աներեւակայելի ա-րագութեամբ: Որչափ կարճ էր նա: Ժամացոյցը խփում էր ոչ թէ րօպէներով եւ ժամերով, այլ տարիներով եւ դարերով:

—Լաւ նայիր, ասաց ինձ սատանան. տես, անհ, թէ ինչ պիտի փչանէ մարդուն: Եւ ցոյց տուեց ինձ մի փոքրիկ սեւ—փող, որ նա չարտեց երկրի վրա:

Դուք տեսել էք անշուշտ մի այգի, որտեղ ջրամբարի ափին արեգակի տակ փռված են անթիւ ձկներ: Նրանք խաղաղ են եւ երջանիկ: Բաւականաչափ ջերմացած, այժմ էլ մտնում են մօտակայ ջրի աւազանը՝ նրա յատակում զովանալու:

Կատարելապէս գոհ են նրանք իրանց վիճա-կից. ոչ մի բան չէ վրդովում նրանց խաղա-ղութիւնը:

Բայց անա անցորդի մէկը գցում է, պատահ-մամբ կամ դիտմամբ, ջրամբարի մէջ մի կտոր հաց:

Իսկոյն արթնանում են արիւնառու ըը-նազդները...

Իւրաքանչիւրը շտապում է դէպի գայթակ-ղեցողից աւարը: Սկսվում է պատերազմ, կեանքի եւ մահի սոսկալի կռիւ:

Ձրի մակերեսովի վրա անմիջապէս երեւում են վիրաւորվածներ, արիւնաթաւալ դիակներ:

մի բան կը լինի բոլոր խեղճերին բարօրու-թեան մէջ լողացնելու: Մենք հոգանք մեր աղ-քատներին:

Այդ է պատճառը, որ մենք, ընթերցող, Բա-գուի հրկիզեալներին կրկնապատիկ թշուառ պիտի համարենք:

Թշուառ են նրանք իբրեւ հրկիզեալներ: Բայց աւելի թշուառ են, որ Բագուում են հըը-դենի զոհ գնացել եւ ոչ թէ մի ուրիշ տեղում: Միլիոնատէրեր կան, ուրեմն եւ մենք պիտի փակենք մեր գրպանները: Ահա թէ ուր են հասցնում մեզ Բագուի միլիոնները...

Մի օտար մարդ, նայելով հայերին, գտնում է, որ նրանք ոչինչ կարեկցութեան արժանի չեն, քանի որ ունեն այնքան միլիոնատէրեր: Իսկ մենք, լսելով Բագուի մէջ պատահած դժ-բաղդութեան լուրը, հանգարտ չուռ ենք դա-լիս միւս կողմի վրա, լաւ իմանալով, որ Բագ-ուում միլիոնատէրեր չափ կան:

Սա մի դրութիւն է, որ բաւական յիշեցնում է հրէական ազգի դրութիւնը: Բօտիլը հրէայ է, ուրեմն չը պէտք է ընդունել, թէ կարող է լինել դժբաղդ, անօթի հրէայ: Կան կովկասեան Բօտիլներ, ուրեմն նրանց պատերի տակ մոնոթէստներն չը պէտք է օգնել:

Հօ մենք ու դուք, ընթերցող, շատ լաւ գի-տենք, թէ ինչ են մեր համագի միլիոնատէրե-րը: Հօ արեւի լոյսից պարզ է մեզ համար, որ մեր միլիոնատէրերից ոչ մէկն էլ դժգոհ չի լի-նի, եթէ մենք ամենքս սովից կամ համաճա-րակ հիւանդութիւնից կոտորվեցինք: Այն ինչ ա-նուն կրող պարոնը իր միլիոնների թիւը տա-նակների է հասցրել, յոյս ունի հարիւրների էլ հասցնել: Բայց մեզ ինչ: Այս «մեղը» մի անհատ չէ, հարիւրներ, հազարներ չեն, այլ բիւրեր, հարիւր հազարներ:

Հացի կտորն էլ, կուր ժամանակ փշրովելով, արօրվելով, կորչում է անհետ...

Սատանայի վայր գցած սեւ—փողը երկրի վրա, մարդկանց մէջ, արեց միեւնոյն ներգոր-ծութիւնը, ստեղծեց միեւնոյն պատկերը...

Մարդիկ յարձակվեցին միմեանց վրա, քաշ-կոտվեցին միմեանցից եղունգներով, ատամ-ներով: Այնուհետեւ նրանք գինվեցին քարե-րով, նիզակներով, աղեղներով միմեանց կոտո-րելու համար: Յետոյ, զգալով աւելի բարձր ընդունակութիւն աւելի մեծ չարիքների գործե-լու համար, նրանք երկաթից, պողպատից չի-նեցին այնպիսի գործիքներ, որոնցով կարելի էր աւելի հեշտ միմեանց ծակտել, կոտորել, սպանել, ուղեղը ցրել տալ: Սակայն մար-դիկ սրանով էլ չը բաւականացան: Պէտք եղաւ քանդել, աւերել, ընաշխել անել՝ հարըս-տութիւն եւ իբր թէ երջանկութիւն ձեռք բե-րելու համար: Եւ անա նրանք հնարեցին վա-ռօգը, էլեկտրականութիւնը եւ այլն, եւ այլն: Փոքրիկ ատրճանակից սկսած եւ թնդանօթով ու զանազան դժոխային մեքենաներով դեռ չը վերջացած՝ սկսեցին նրանք գործել եւ գործել... Երկրի մակերեսով շարժվող սպունգի պէս ծծել էր մարդու արիւնը: Ֆետերը, ծովերը կարմիր գոյն էին ստացել:

Միջին եւ անգամ կանաչը, այս անխել, դադա-նային արիւնաժարաւորութեամբ յափշտակված, յայտարարեցին, որ իրանք եւս, զգալով բաւ-կանաչափ ոյժ իրանց բազուկներում, իրաւունք ունեն կուսելու եւ կոտորածներ անելու:

Այնպէս որ եկաւ ժամանակ, երբ նրանք դաշտերից ծնելուց, պատերազմողների թիւը օրըստօրէ պակասեց, մինչդեռ սպանելու, ա-ւերածների անելու տենդը անընդհատ աճում էր ու աճում...

Այս տեսարանները այն աստիճան զգուշի, ջրամեղի թւացին ինձ, որ ես այլ եւս նայել չը կարողացայ ու փակեցի աչքերս:

Այդ միջոցում սարսափելի քրքիջ արձակեց սատանան, եւ ես նորից բացի աչքերս:

—Նայիր, ասաց սատանան, դեռ սրտեղ ես... Աշխարհի մեծամեծ պետութիւնների վեր-

նորերս հայ Բօտիլներն մէկի ծառայողը սպանվում է, եւ ինչ են տալիս այդ ծառայողի ընտանիքին:—Միանուագ 500 ռուբլի, այսինքն այնպիսի մի գումար, որ գուցէ բաւական չը լինի մի դիւծին «կարգին» աթոռ գնելու այդ Բօտիլներին բնակարանի համար...

Այսքան պարզ իրողութիւնը հասկացող չը կայ: Միայն կատարեալ անբարոյականութեան կարող է հասցնել մեզ այն, որ մենք սկսում ենք յոյս դնել այնպիսի առատ աճեռն մի-լիոնատէրերի վրա: Մենք իսպառ կոչնչանաք իբրեւ ազգ, իբրեւ բարոյական մի մարմին, եւ թէ թաղվենք այնպիսի հրէշաւոր սոցիալութեան մէջ, թէ Բագուում միլիոնատէրերը շատ են, ուրեմն եւ օգնութեան կարօտ չեն այնտեղի թշուառները:

Ո՛չ: Բագուի հրկիզեալները, աղքատները, բանուորները կրկնապատիկ թշուառ են: Թը-շուառ են իբրեւ արկածախններ, թշուառ են մանաւանդ այն պատճառով, որ ապրում են միլիոնների կողքին...

Չը մոռանանք այս կրկնակի դժբաղդու-թիւնը:

Մեր գաւառները ուրախ են: Մեռած, թմրած Ալեքսանդրօպօլը յանկարծ տօներին մէջ է ըն-կել: Բացեց դրաճարան, պիտի բացվի առեւ-տրական միջնակարգ դպրոց, թատրօնական ներկայացումներ ունի: Որքան կուսուրական բարիքներ, եւ այդքանը միանգամից, յա-նկարծ, կարծես բարի հրեշտակը, վերջապէս, նկատել է այդ վաղուց ի վեր մոռացված, քնած անկիւնը եւ իր թիւերը տարածել է նրա վրա:

Թող այդքանագործայինները աւելի եռանդով սեղմվեն այդ թիւերի տակ: Հօ տեսնում են նրանք, թէ որքան ուրախալի ու կենսունակ

չին մարդիկ կանաչ սեղանի շուրջը բազմած՝ խորհրդակցում էին:

Սեղանի վրա, մէջտեղը, ընկած էր վերջին սեւ-փողը, որ բազմականներից իւրաքանչիւրը աշխատում էր յափշտակել, իւրացնել՝ զանա-զան դիւանագիտական խարդաւաններով մի-ջոցով:

Փոխադարձ զիջումների խոստումներ, պա-հանջների չափաւորութիւն, սերտ բարեկամա-կան արտայայտութիւններ, իրաւունքների չափ ու սահման եւ հազար այսպիսի գեղեցիկ բաներ թափվում էին ամեն կողմից:

Սակայն երկար չը տեւեց այս սրտաշարժ տեսարանը:

Նորից սկսվեց կռիւ, մի սոսկալի, յուսահատ կռիւ...

Եւ տեսայ, ինչպէս վերջին մարդը, երկրի վրա մեն-մենակ մնացած, աղահուլեմամբ յա-փշտակեց արդէն ժանգոտած սեւ-փողը, կուլ տուեց եւ... Թունաւորված՝ փովեց գետնի վրա:

Այն ժամանակ ես տեսայ, թէ ինչպէս մի ճառագայթափայլ էակ, վայր իջնելով երկնքից, ճախրում էր զիւրիների գլխին եւ կանչում էր. —Վեր կացե՛ք, եղբայրներ. ես եմ աւետա-բեր հրեշտակը: Ահա բերել եմ ձեզ ամենքիդ համար խաղաղութիւն եւ սէր...

—Ո՛ւշ է, պատասխանեց սատանան ամպե-րից: Եւ արդէն վերջացրի իմ գործը եւ այն...

Սա միջոցում վերջին մարդու մարմինը ար-դէն սկսում էր լուծվել. նրա միւր կտոր-կտոր թափվում էր, իսկ նրա մերկ կմախքի տակից՝ կամարածեւ բարձրացած կողերի արանքում սեւին տուեց պայծառ արեգակի տակ ինձ լաւ ծանօթ սեւ-փողը...

Թէլը պատրաստ է, ասաց ծառան ականջիս՝ հազիւ լսելի ձայնով:

Եւ զարթնեցի:

Ընդամենը քնել էի հինգ րօպէ:

Սերմացան

բան է այդպէս լինելը, բարի հրեշտակի թեւերով հովանաւորված լինելը: Թող չը մոռանան, որ հրեշտակը թողնել, հեռանալ էլ գիտէ. եւ թողնելուց յետոյ թողնում է սատանաների ու դեւերի սեւ թագաւորութիւնը...

Մի թեթեւ ուրախութիւն էլ երեւանը տեսաւ. այնտեղ էլ բացվեց գրադարան: Ախալ-ցխան դեռ ուրախ չէ, բայց գեղեցիկ յոյսերի վրա է. պատգամաւորութիւն է ուղարկել թիֆլիս, ուղում է ճակատ առ ճակատ յայտնել իր սիրելի իղծերը: Խնչ իղծեր են դրանք: Հաւաքվել են եկեղեցու ծխականները մեծ թւով, երէցփոխի կողորդում անյայտացած փողերն են ուղում գտնել: Բայց այդ իղծը իղծ է մնում: Ո՞վ է խանդավարում: Ո՞վ երկինքը, ո՞վ կայծակներն ու որոտոցները, ո՞վ սատանաները, ո՞վ մանաւանդ չինական բոկոսները: Թիֆլիսի կոնսիստորիան է պատճառը. նա չէ խանդավարում, գոնէ բացարձակ չէ ասում թէ խանդավարում է, այլ... ժողովութիւն է անում, եւ այդ ժողովութիւնն պատճառով է, որ սուր դանակը չէ իջնում կտրելու երէցփոխների ամենակուր կողորդները:

Թող շատ չոգեւորվեն ախալցխացիները. երէցփոխների կողորդ կտրելը շատ հեշտ կը լինէր, եթէ իւրաքանչիւր կողորդի վրա մի տէր տէրական կամ վարդապետական գրգռան չը լինէր փաթաթված: Կողորդը կտրեցի, լաւ, բայց ո՞վ ձեռք թող կը տայ գրգռան էլ կտրէ: Անա ինչի վրա չեն մտածում երէցփոխական կողորդները համար դանակ սրողները:

Բողոքովին ուրիշ տեսակի է Շուշու ուրախութիւնը: Դա արդէն ուրախութիւն չէ, այլ կատարեալ հրճուածք: Եւ ուրախութիւնը այդ տեսակ կերպարանք է ընդունել այն պատճառով, որ Շուշու մարդկանց վերացական, մընտաւոր, ինչ որ երազական բախտի խօսքերով չեն կերակրում, այլ ուղղակի չոր մրգեղէնով — չամչով, ալանով, ընկզղով:

Ո՞վ մի տեղ այնպէս լաւ չը գիտեն ժողովրդական զբօսաւիրութիւնը շահագործել, ինչպէս Շուշու թեմական դպրոցում: Այս րօպէին այնտեղ ուսուցիչներ չը կան ամենակարեւոր առարկաների համար. աստուածաբան, աւանդում է բնական գիտութիւններ, տիրացուն մաթեմատիկայի ուսուցիչ է: Դասաւորութիւնը մօտաւորապէս այսպէս է: Բողոքողներ եղան, բայց դրանց մտրակի կոթերով դուրս արին: Եւ անա այս բողոքը մոռացված է Շուշուցի հրճվում է, որովհետեւ նրա համար տօներ է պատրաստում Բենիկ վարդապետը, — չամիչ է բաժանում, աշակերտներին պար ածել է տալիս...

Հանձնարեղ միտք է, չէ: Ծածկել կրթական խաւարամտութիւնը, անբարեխղճութիւնը չամիչի ու ընկզղի չինած կարիքատաններով, բենիկ-գարեան կրակներով եւ մոգական պատկերներով քննելու հասարակութիւնը: Ո՞վ միայն քննադատ, այլ եւ անուշ ժպիտներ, բուն ծափաւորութիւններ քաղել: Ինձ հաղորդել են մասնաւոր կերպով, որ դպրոցի հոգաբարձուները այնքան զգացվել են, որ սկսել են համբուրել կարգադրիչներին ամեն մէկին: Արտասուքներ էլ են թափվել եւ այնքան շատ, որ Շուշու արեգակը մինչեւ այսօր չէ չորացրել դպրոցի յատակներն ու բակը:

Ճշմարիտ, շատ նախանձելի աշուղութիւն է: Ասում են, որ շուշուցիները իրանց թօփխանութիւնը կանգնած, կիսաթուփ աչքերը դէս ու դէն ման ածելով, յօրանում են, սպասելով թէ երբ կը գայ ճաշի ժամը եւ արտասուքնոտ աչքերով ասում են.

—Ախ, երբ մէկ էլ չամիչ կը բաժանեն...

Այս հանրային տենչանքը, ինչ խօսք, շատ ետեւ կիրաւորվի: Նախ եւ առաջ — նա շատ էժան է նստում: Երկրորդ՝ առանձին ընդունակութիւն չէ պահանջում, եւ երրորդ — որ ամենազգաւորն է — ամբողջում է «ազգային գործիչներ» դերը եւ ժողովրդականութիւնը:

Հայրէ, տղերք: Մի քիչ պար, մի քանի ֆուշու չամիչ, հինգ-վեց գրօշի բէնդալան կրակ, քիչ ճառ, քիչ էլ դերասանական ողբ ու արտասուք: Դիւթական բալատանը գտնված է...

Շնորհաւորները շուշուցիներին. մի ամբողջ տարի հրքան տօներ պիտի տեսնեն, հրքան չամիչ պիտի սպառեն...

մարդուն: Եւ մինչդեռ բոլորը յուզված լուռ էին վճիռը, եւ մտածում էին, — որչափ խեղճ, դժբաղդ ուրուականներ չըլուծ են, թափառում մեղանում եւ երբեք չեն էլ տեսնում դատարան: Նրանց վիշտը, արտասուքները չեն ելած փողոց եւ հրապարակ. մենք նրանց համարել ենք երկանիկ, բաղաւոր ամուսիններ, եւ սառը խոնաւ դերեղմանը առմիշտ խել է մեղանից եւ ամուր է պահում նրանց գաղտնիքը... Նրանց գաղտնիքը, որ մեր գաղտնիքն է եւ որին ծնունդ է տուել մեր այն համոզմունքը, թէ կինը մեր սեփականութիւնն է: Մեր սեղանը, մեր աթոռները, մեր բոլոր կահ-կարասիքը այն աստիճան սեփականութիւնն են, ինչպէս կինը:

Նախանձը եւ կասկածը այրում են մեր փողոցի սրտերը: Մենք պահանջում ենք, որ կինը մեզ շատակաւ ամբողջ մարմնով, ողջ հոգով, անգամ երազներով, եւ մենք պահանջում ենք, որ նա, այդ թող էակը, օրօրոցից սկսած միայն մեզ սիրէ, պաշտէ:

Նախանձը եւ կասկածը չը գիտեն չափ եւ սահման, չը գիտեն ինչ է ժամանակը: Ներկան եւ ապագան չեն բաւական, մենք պահանջում ենք կնոջից եւ անցեալը, անցած տարիները, անցած ամիսները, անցած օրերը եւ անցած ժամերը... մեզ պէտք են բոլորը: Կնոջ բոլոր անուշ, քաղցր խօսքերը, կնոջ բոլոր ժպիտները մեզ, միայն մեզ պէտք է պատկանեն: Կինը պէտք է լինի մեր սեփականութիւնը... Մենք, տղամարդիկ, մենք ջոկ բան ենք, մեզ համար չը կան պատուր, սահմաններ: Մեր անցեալը կարող է լինել ցեխ, մեր ներկան — ցեխ, մեր ապագան — ցեխ: Ո՞վ իրաւունք ունի մեզ դատել: Կինն է միայն սեփականութիւնը...

Ճշմարիտ է, որ մենք համբուրում ենք կնոջ ձեռները, կնոջ շորերը, անգամ հողը, որի վրա կանգնած է մեր սիրած, պաշտած կինը, եւ սա — կանայք: Մի համբուրեք կնոջ ձեռները, ամիսներ էլ աւելի պահանջում ենք, որ կինը լինի եւ մնայ մեր սեփականութիւնը...

Ո՞վ, դա մեծ սխալ է, ծանր յանցանք է:

Կինը կարող է միայն մեր ընկերը լինել եւ, իբրեւ ընկեր, նա պէտք է լինի մեզ հաւասար ամեն կողմից: Մի համբուրեք կնոջ ձեռները, կնոջ շորերը, մի համբուրեք հողը, որի վրա նա կանգնած է, մի համբուրեք, որովհետեւ դուք նրան չեք սիրում, միայն ստոր կրքը յուզում է ձեր կուրծքը եւ վառում է ձեր տաք արիւնը: Այո, դուք չեք սիրում, որովհետեւ կինը կարող է լինել մի եւ նոյն ժամանակ եւ կուռք եւ ստորուկ: Թող չը լինի ձեռ համար կինը կուռք, թող լինի նա ձեր ընկերը եւ նա կը դադարի այնուհետեւ լինել ստորուկ:

Իմ խօսքս հայ մայրերին. նրանց ձեռներումն է մեր սերնդի դաստիարակութիւնը: Թող ամեն մի մայր այնուհետեւ քաղցր է իր տանը, որ կինը — կուռք է, բայց եւ ստորուկ էլ չէ եւ, իբրեւ ազատ մարդ, երբեք կարող չէ ուրիշ սեփականութիւնը դառնալ:

Եւ այն գեղեցիկ օրը, երբ մենք բոլորս կը համոզվենք, որ կինը սեփականութիւնն չէ, որ նա կարող չէ լինել ոչ կուռք եւ ոչ ստորուկ, մեր ամուսնական կեանքը կը դառնայ երջանիկ, նախանձելի, եւ այդ գեղեցիկ օրը մենք էլ, արդարաւոր, կաշխատենք, որ մեր անցեալը եւ մանաւանդ ներկան եւ ապագան չը լինեն միայն ցեխ...

Աշխատեցէք, հայ մայրեր, սերմանել օր առաջ բարի սերմը, շտապեցէք համոզել ձեր ձեռքի եւ նազիկ գաւաթներին, որ կինը մեր սեփականութիւնն չէ եւ երբեք չէ կարող էլ մեր սեփականութիւնը լինել...

Գր. Չալոյան

Մ Ս Տ Ե Ն Ա Գ Ր Ո Ի Թ Ի Ե

I

Մտաբան, ճիշդ կամ հայրենասէր օրիորդ, պատմական գրամա, 5 տարւածով:

Սարգսն ասում է մի տեղ, թէ թատրոնական գրուածքները քննադատելու համար պէտք է տեսնել նրանց րա մպի լոյսով, այսինքն բեմի վրա: Այդ ասված է, ի հարկէ, այն գրուածքների մասին, որոնք բախտ են ունենում ներկայացվել չորհրդով դերասանների մասնակցութեամբ:

Այդպիսի բախտ «Ռուզանը» ունեցել է, որովհետեւ առաջին անգամ արժանացել է րա մպի լոյսին 1882 թ. Ազամանի, տիկին Հրաչիայի, օր. օր. Գարապաշանների եւ նրանց միւս ընկերների մասնակցութեամբ:

Ինչ տպաւորութիւն է գործել այն ժամանակ «Ռուզանը» — չը գիտեմ: Եւ առիթ եւ ունեցել նրա ներկայացումը տեսնել մի անգամ միայն, ու վատ անամբողջ, եւ այդ ներկայացումը ինձ վրա թողել է շատ աննպաստ տպաւորութիւն:

Այժմ, երբ «Ռուզանը» տպվել է «Թատրոն» հանդեսում, եւ կարգացի այդ ողբերգութիւնը, եւ ընթերցանութիւնից ստացած տպաւորութիւնն աւելի լաւ էր, քան ներկայացումից ստացածս, սակայն ինձ դարձեալ թւում է, թէ «Ռուզանը» թող ողբերգութիւնն է:

Ամենից առաջ քննադատութեան չէ դիմանում ողբերգութեան հիմնական գաղափարը, — այն ձեւը, որ ընտրում է Ռուզանը իր անձը հայրենիքի օգտին զոհելու համար: Թաթար Բուրան ուղում է նրան իր հարձը դարձնել եւ միայն այդ գնով է համաձայն փրկել հազարաւոր զոհերին եւ հանդիստ թողնել Ռուզանի հօրը, Ջալալ իլյանին: Ռուզանը վճռում է գնալ Բուրանի վրանը, համաձայնութիւն յայտնել նրա հարձը լինել, բայց հետը թոյն է վերցնում, որպէս զի թուանորդի անպատեած լինելուց առաջ: Նալոյի եւ ընթերցողի մէջ բնականաբար հարց է ծագում, — մի՞թէ թաթարները, տեսնելով, որ Ռուզանը իրանց խաբել է, չեն ուղի իրագործել իրանց ծրագիրը, որից ձեռք էին քաշել Ռուզանի համար, եւ յիմարացած, դատարկաձեռն կը վերադառնան իրանց տեղերը, վերջապէս ինքը Ռուզանը, երբ գնում էր այդ գաղափարների ճանկը, երբ վառագի էր իր կուսական պատուով, մի՞թէ չէր մտածում այդ բանի մասին: Ողբերգութեան մէջ պատասխան չը կայ այդ հարցերին, եւ «Ռուզանը» վերջանում է մի մեծ հարցական նշանով:

Այնուհետեւ ողբերգութեան թուութիւնը կայանում է նրանում, որ հեղինակին չէ աշուղել ստեղծել ոչ մի տիպ, ոչ մի բնաւորութիւն: Չեն աշուղվել հեղինակին եւ միանաւորութիւնները, իսկ միանաւորութիւնը, ինչպէս յայտնի է, ողբերգութեան հիմնաքարն է, որովհետեւ միանաւորութիւններն են, որ հարաւորութիւն են տալիս դրամատուրգին, այսպէս ասած, բեռնադրեան ճառագայթներով լուսաւորել, գործող անձնաւորութիւնների ներքին աշխարհը իր բոլոր խորքերով:

«Ռուզանի» միանաւորութիւնները առհասարակ չլրալի են եւ չինում:

Հեղինակին աշուղում են տեղ-տեղ միայն զիջողները, որոնք երբեմն կտրական են, աշխոյժ եւ բնորոշ:

Պէտք դուրս չէ եւ աշուղված էֆֆէկտաւոր հատուածները:

Այդ դիւրագիտով ու այդ հատուածներով եւ, բացի այդ, ամբողջ ողբերգութեան հիմնական հնչիւնը կազմող հայրենասիրական զգացմունքով պէտք է բացատրել, մեր կարծիքով, «Ռուզանի» համեմատական աշուղութիւնը հայ բեմի վրա:

Հեղինակի ոճը լաւ է, բայց տպաւորութեանը խանգարում են այնպիսի գրաբարբառութիւններ, ինչպէս «Օն եւ օն», «կարի համարձակ», «զինքը», «զի», եւ այլն եւ այնպիսի տարօրիժնակ ձեւեր, ինչպէս «այնոց», «այդոց»:

II

Գ. Մ. Тумановъ „Характеристики и воспоминания“. 207 стр. п. 50 к. Тип. 1901.

Պ. Գ. Թումանովի գրքովը կազմող բնորոշումներն իշողութիւնները «Թեթեւ ուրուած գծեր են եւ ոչ թէ լրակատար կենսագրութիւններ, յիշատակարաններ կամ քննադատական-պատմական մօնօգրաֆիաներ», ինչպէս յայտնում է եւ ինքը հեղինակը առաջաբանում:

Իբր այդպիսի ուրուածքների ժողովածու պ. Գ. Թումանովի գրքովը կարգացվում է հետաքրքրութեամբ, երբեմն-երբեմն միայն դուք նկատու էք, որ այդ յօդուածները արտասովոր են լրագիրներից, մեծ մասամբ «Новое Обозрение»-ից, ու իբր լրագրական յօդուածներ կապ ունեն տեղ տեղ րօպէի հետաքրքրութեան հետ, որ կորած է արդէն այժմ:

Գրքովի մէջ մեզ դուր է գալիս առանձնապէս նրա ընդհանուր տօնը — անկողմնապահ եւ լուրջ, որի նորհիւ մի շարք ուռ, վրացի, հայ գործիչներ անցնում են ընթերցողի առաջ ձեռք լուսաւորութեամբ:

Հայերից երեք հոգի են միայն տեղ գտել այդ գրքովում — Գ. Արծրունի, Գր. Ջանչեան եւ Կատարեան Տէր Ստեփանեան: Շատ աւելի տեղ է տրված վրացիներին: Այդ բացատրվում է նրանով, որ հեղինակը, թէեւ հայ է, հայերէն չը գիտէ, բայց վրացերէն կարգում է: Դրանով է բացատրվում եւ այն, որ Արծրունուն նուիրված յօդուածի մէջ շատ ընդհանուր գծերով է խօսված նրա հայեացքների մասին:

Յամենայն դէպս, յանձնարարում ենք այդ գրքովը ընթերցողներին ուշադրութեան: Մեր ամեն շահերով լի հասարակական կեանքի բեմի առաջին կարգերը միշտ բռնած են լինում դատարկ անհատներ, եւ միշտ չնորհակալութեան

են արժանի այն գրողները, որոնք հասարակութեան ուշադրութիւնը դարձնում են բարոյական եւ մտաւոր արժանիքներով օժտված գործիչների վրա:

Տ. Յ.

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

Մեզ հաղորդում են, որ Վեհափառ Կաթողիկոսը թողարկել է Ներսիսեան դպրոցի հոգաբարձութեան դպրոցի նոր շինութիւն կառուցանել վանքի եկեղեցու մօտ գտնվող զբոսայգում: Մօտ օրերս Վեհափառ այս իմաստով յատուկ կոնգակ պէտք է տայ հոգաբարձութեան: Լսում ենք, որ նոր շինութեան պէտք է ձեռնարկվի առաջիկայ մարտին:

Մեզ հաղորդում են, որ կովկասեան ցուցահանդէսի համար ընտրված կարգադրիչները եռանդուն կերպով սկսել են առաջ տանել ցուցահանդէսի շինութեան գործը: Այս օրերս, նշանակած հողի տարածութիւնը կը բաժանվի մաս-մաս համաձայն այն բաժինների, որ պէտք է լինեն ցուցահանդէսում:

Այսօր, կիրակի, յունվարի 28-ին, Թիֆլիսի կրօնօկում տեղի կունենայ «Կարմիր եւ Սեւ» կոչված պարահանդէսը, որի գլխաւոր կառավարչուհին է Թիֆլիսի նահանգապետի ամուսինը տիկ. Սվեչինա: Պարահանդէսը տրվում է բանտարկաւորների եւ քաղաքացիների զաւակների օգտին:

Մեզ հաղորդում են, որ Մարցի կալուածքի դատաստանական գործի քննութիւնը տեղի կունենայ առաջիկայ փետրվար ամսին:

Գանձակի նահանգի Տէրաթէր կայարանից յունվարի 26-ից «Кавказ» լրագրին հեռագրում է. «Ջիվանչիի գաւառի կառավարիչ Բէռու, կատարելով Գանձակի նահանգապետի դիմաւորութեանը հրամանը, Մէլիք-Հուսէյնով պրիատուրի հետ միասին, չըվապատեց ջիվանչիից յայտնի փախստական Սալի-Մահմադէի տունը, որ (փախստականը) սարափ էր տարածում գիւղի վրա տասն եւ ութ տարի չարունակ, եւ հրացանաձգութեան ժամանակ սպանելի Սալի-Մահմադէի ձեռքից»:

Յունվարի 25-ին, հինգշաբթի, ոստիկանութիւնը բռնեց յայտնի կողոպտիչ եւ ընդդիմադիւտ, Գուրապի բնակիչ Կօստա Կօպալին, որ աւագակութեամբ էր պարագլուծ Անդրուկանեան երկաթուղու գծի վրա, սպանութիւններ է կատարել Բագում եւ մի քանի ամիս առաջ կողոպտել է Բօրժումով մի կապալաուրի: Կօպալին ուղարկեցին Մետեխի բանտը:

Մեզ հաղորդում են, որ առաջիկայ փետրվարի 4-ին, Թիֆլիսում դերասանուհի տիկ. Մեքիսեան իր խմբի հետ ներկայացնելու է Գ. Մուսղուկեանի յայտնի «Պէպօ» պիէսը: Այդ օրը լրանում է «Պէպօ»-ի ներկայացման երեսնամեայ տարեդարձը:

«Россия» լրագրին հեռագրում են Կամենեց-Պոդոլսկից. «Դիւերալ-նահանգապետը մի շըրջաբերականով առաջարկեց հարաւարեւմտեան երկրի նահանգապետներին այսուհետեւ թող չը տալ եւ հալածել գիւղական վարչութեան պաշտօնականի կողմից ամեն տեղ նկատվող վրեւժարական եւ կամայական վերաբերմունքը դէպի գիւղացու անձնաւորութիւնը»:

ԿԱՐՍԻ մեզ գրում են. «Այստեղ մինչեւ յունվարի 1-ը կարգին տաք էր եւ բնաւ ձիւն չը կար, այժմ կատարեալ ցուրտ է լինում: Թէեւ համարեա դարձեալ ձիւն չը կայ»:

ԱՍՏԱՐԱՆԱԿ գիւղից (Գորու գաւառ) մեզ գրում են. «Այս օրերս մեր գիւղում մի տաւրօրինակ դէպք պատահեց: Մեր գիւղի նախկին տանուտէր եւ այժմ գիւղական դատաւոր Նազարէկովի որդիներից մէկը մի քանի տարի առաջ զինուորակոչի ժամանակ վիճակ է ընկնում եւ զինուոր է գնում Ռուսաստանի քաղաքներից մէկը: Երկար ժամանակ ծնողները նրանից ոչ մի լուր չէին ստանում եւ չէ գիտէին, թէ ուր է կորել նա: Սակայն անցեալ տարի, մի գեղեցիկ օր, գալիս է վերջապէս իր ծնողներին մօտ այդ կորած որդին: Սկզբում թէեւ ծնողները չեն կարողանում ճանաչել այդ երիտաւարին, որովհետեւ նմանութիւն քիչ են գտնում իրանց կորած որդու հետ, բայց նա հաւատացնում է, թէ ինքն է նրանց որդին: Մի ամ-

վարի 15-ին կատարած հետախուզման ժամանակ 60 ֆրանսիացի զինուորական լեյտենանտներով միասին ենթարկվեցին յարձակման չինական կանոնադր զորքերի կողմից: Չինացիները յաղթվեցին: Ֆրանսիացիներից վիրավորվել են երեք հոգի:

Պեկին, Դեպարտմենտ, առաջատան, յայտարարված զինուորական լեյտենանտները պահվում են, որ Տոնգոսի մասին պատեր ենթարկվել են համաձայն են կետեր չորսնիկ պրինց Տոնգոսի եւ զուգու Լանին միայն այն պատճառով, որ նրանք ազդեցություն ունեն կայսերական ընտանիքի հետ, թէեւ նրանց յանցանքները չունեն ծանր նշանակություն: Տոնգոսի լեյտենանտները:

ԲԱՐՈՒ: Հրդեհը դարձրեց: Այդպիսի են տասը տուն եւ հինգ հատ 35 միլիոն պուլո ունեւորութեամբ ամբարներ, որոնք գրեթէ լիքն էին մագլցվում եւ նաւթով: Վնասները անցնում են վեց միլիոն բուլու: Վնասված մարդկանցից զոհված են տասն հոգի այդպիսով, իսկ լուսնվառները թիւը ընդամենը 60 է, որոնցից 41-ը ծանր կերպով են վնասված եւ 6 հոգի մեռել են: Սկսում են փորել փրկարաններ, որոնց տակ կան շատ զոհեր: Կրակի զոհ են դարձել նաեւ բազմաթիւ զինուորական լեյտենանտներ: Առայժմ վնասվածներ կան միայն հարկւր հոգի: Տեղում կազմված է մեծածնների եւ վնասվածների ցուցակագրութեան մասնաժողով, որոնք ինքնուրուի նպատակով կասպեան—չինական ընկերութեան Բոաչիլի ներկայացուցիչը դիմել է Պարիզ, ինքնուրուի կան օգնութիւն խնդրելով վնասվածների համար: Երեւելի, Մանթաշիլի եւ Էլէքտրական ոյժի զործարանները չեն վնասվել: Անտուն մնացած մի քանի հարկւր ընտանիքները զետեղել են քաղաքում եւ չրկալու: Նաւթարդինաբերողների ժողովի խորհրդի միջոցներով հաց է բաժանվում: Նուրբատութիւններ են ստացվում «Էսթիմ» լրագրի խմբագրատանը եւ ժողովի խորհրդարանի գրասենեակում:

ԽԱՐԿՈՎ: Չինական զատարանի վճռով մահվան դատաւարութեամբ բռնաբերին ներումն է չորսված:

ՊԵՏԵՐՈՒԹԻՒՆ: Հրատարակված է, որ 1901 թ.ին բաց կը թողնվի պետական դանձարանի մի կարգի տոմսակներ տանելով: Միլիոն բուլի գումարի, նոյն գումարի հանգցրած տոմսակների փոխարէն:

27 յունվարի
ՊԵՏԵՐՈՒԹԻՒՆ: Թագաւոր Կայսրը հրամայեց չինական արեւելեան երկաթուղու պահակախումբը վերադրել սահմանադրւած պահակների առանձին կորպուսին եւ կազմել նրանց այդ կորպուսի կազմի մէջ առանձին չրլան. հաստատել այդ չրլանի մասերի համար այնպիսի կազմակերպութիւն, ինչպէս գոյութիւն ունի սահմանադրւած պահակայինների առանձին կորպուսում, եւ լրացնել այդ մասերի կազմը յիշեալ կորպուսի համանման հիմքերով: Ապահակարանի պահակայինութեան ծախսը թողնել չինական արեւելեան երկաթուղու ընկերութեան վրա:

Թագաւոր Կայսրը բարեհաճել է նշանակել Օլոնցկի եպիսկոպոս Նազարիլին Նիժնի-Նովո-ձորոզի եւ Արզամասի եպիսկոպոս, Նիժնի-Նովո-ձորոզի թեմի յաջորդ, Բալախնայի եպիսկոպոս Անատոլիյին Օլոնցկի եւ Պետրոզավոզի եպիսկոպոս, Տոմսկի թեմի յաջորդ Սերգի եպիսկոպոսին Օմսկի եւ Սեմիպալատինսկի եպիսկոպոս, Պետերբուրգի հոգեւոր ցենզորական կոմիտէի գլխաւոր ցենզոր Վլադիմիր վարդապետին Սարապովի եպիսկոպոս եւ Վեստոկայի թեմի առաջին յաջորդ:

ՆՕՎՕԶԵՐԿԱՍՍԿ: Այստեղ լուր է ստացված, թէ Դոնեան չրլանում կատարված է մի վերին աստիճանի խորհրդաւոր եղեանագործութիւն, — զանազան տեղերում միաժամանակ սպանված են իրար հետ սերային կապ ունեցող աղաւարդ եւ կին: Սպանութեան նպատակը եղել է, ինչպէս ենթադրում են, վրէժնորդութիւն կամ մի ուրիշ յանցանք ծածկելու ցանկութիւն:

ՂՕՆԴՕՆ: Կիտայէնէր հեռագրում է Պրէտորիայից: Էդելվետ դեռ գտնվում է, ինչպէս հազորում են, Սմիթֆիլդից դէպի հիւսիս եւ գնում է արեւելեան ուղղութեամբ: Նրա դէմ ուղարկված զորաբաժինը կորեց երկաթուղիական գիծը Պոմպէյ-Սայդինգի մօտ եւ գնում է դէպի Բիլիլիպոլի:

ԲՈՒԽԱՐԵՍ: Միջխոր նախադէպ յայտնեց համայնքների ժողովում եւ սենատում, որ մի-նիստութիւնը հրաժարական է տուել:

ՎԻԵՆՆԱ: Մասնաւոր տեղութիւնների համաձայն Միւրն թագաւորը թողնել բորբոքումն է ստացել: հիւանդի դրութիւնը համարվում է ոչ անկասկած:

ՎԻԵՆՆԱ: Պատգամաւորների ժողովը նախադէպ ընտրեց կոմս Ֆէտտէր-Փօն-դէր-Լիլիէին, իսկ առաջին փոխ-նախադէպ՝ չեխ Չաչէկին: Նիստը փակվեց:

ՂՕՆԴՕՆ: Կառավարութիւնը 11 միլիոն ֆունտ սաւելինգի փոխառութիւն է բաց թողնում 3% պետական օրէկագրաներով, որոնք թւագրված են 1901 թ. 7 մարտի եւ պէտք է հանգցնվեն 1905 թ. դեկտեմբերի 7-ին:

ԲԻՐԻՍՍԷԼ: Պատգամաւորների ժողովը քըննեց Բելգիային Անգլիայի եւ Տրանսիլանի ժէջ միջնորդ հանդիսանալ առաջարկող խնդրագրերը, որի վերաբերմամբ նպատաւոր կարծիք էր յայտնել նրան նախօրէք ընտր յանձնաժողովը: Արտաքին գործերի մինիստրը պատասխանեց, թէ այդ դերը չէ վայելում Բելգիային, եւս աւելի այն պատճառով, որ պատերազմի է ընկած մի պետութիւն, որ պատկանում է Բելգիայի անկախութեան գլխաւոր երաշխաւորների թիւին: Ինչ նայելով մինիստրի բողոքին, ժողովը ընդունեց Հանսոնի առաջարկած բանաձեւը, կազմված էր խնդրագրեր ընտր յանձնաժողովի որոշման ոգով:

Խմբագիր՝ ԱԼԷՔՍԱՆԴՐ ՔԱՆԱԹԱՐ
Հրատարակիչներ՝ ԹԱԳՈՒՀԻ ՏԻԳՐԱՆԵԱՆ
ԻՍՏԱՆԿ ՄԷԼԻՔ-ԱՂԱՄԱՆԵԱՆ

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

ԹԻՖԼԻՍԻ ԺՈՂՈՎԱՐԱՆ

Կիրակի, յունվարի 28-ին
նշանակված է

ԳԻՄՆԱԿԱՆ ԶԵՆԻԿԻՍ

Տոմսակները կարելի է վերցնել ժողովարանի չլէյցարի մօտ առաւօտեան ժամը 12—2 եւ երեկոյեան ժամը 7—2: Չինականները պէտք է լինեն պաշտօնագրեւորով, ոչ զինուորականները սեւ սերպիւղով, իսկ տեղացիները ազգային շորերով: (27, 28) 2—2

ԹԻՖԼԻՍԻ ՔԱՂԱՔՍԵՐԻ ՎԱՐՁՈՒԹԻՒՆԸ

արանով յայտարարում է, որ նրա դիւանատանը այս յունվար ամսի 30-ին, ժամի 1-ին, նշանակված է աճուրդ՝ կապովով տալու տարափոխիկ հիւանդութիւնների 3-րդ եւ 4-րդ բարակների եւ քարէ սարայի շինութիւնը՝ 28138 ր. 40 կոպէկով: Աճուրդին մասնակցել ցանկացողները կարող են տեսնել պայմանագրեր վարչութեան շինարարական բաժանմունքում՝ բոլոր ի օրերը, ժամի 9-ից մինչեւ 3-ը: 3—3

ԹԻՖԼԻՍԻ ԺՈՂՈՎԱՐԱՆ

Երեքշաբթի, յունվարի 30-ին, նշանակված է պ.պ. անդամներ

ընդհանուր ժողով

քննելու համար հաշիւը եւ բաւանքը 1900 թ.ի. հաստատելու 1901 թ.ի նախահաշիւը, կատարելու երկու աւադների եւ նրանց 6 կանդիդատների ընտրութիւնը, եւ կանդիդատների ժողովարանի:

(23, 28, 30 յուն.) 2—3

Պետերբուրգի բժշկական վարչութեան թղթաւութեամբ: Մեծ արկղիկը 5 բուլբու, փոքրը—3 ր. եւ 1 ր. 50 կ.:



ՆՈՐ ՄԻՋՈՑ

մազերը բուցցնելու եւ ամբողջելու համար, ոչնչացնում է թեփը: Գուրս է եկել նաեւ բոլորովին նոր միջոց

ՋՈՒՆԿԱՐԸ

Երեւելի ընթերցիւն եւ սպիտակութիւն տալու համար, ոչնչացնում է արեւի պատճառած սևութիւնը, մոռնեք, տալիս է կաշուին ընթերցիւն եւ սպիտակութիւն: Այդ դեմքը չափաւոր են. մեծ օրուակը, արկղիկի մէջ, 2 բուլբու, փոքրը—1 ր. 50 կ. Մալուխն են բոլոր պարֆիւմերական եւ զեղաւանդական խանութներում: Գլխաւոր պահանջը գտնվում է Պետերբուրգում, Պուշկինայայ փողոց 16, ընկալաւ թիւ 12. պահանջը բաժանմունքները գտնվում են. Թիֆլիսում կովկասեան զեղատոն ապրանքների վաճառման ընկերութեան խանութում: Նրանք են հրապարակ եւ նրա բաժանմունքները: Միջոցիւն փողոց 16 Բազում. նաեւ Միջոցիւն կառուցողի վրա: Պաշտօնի եւ Արիւստակովի զեղատոններում: Օտարաբաղադրացիները պատուէրները կատարվում են անմիջապէս՝ պատուով: 48—100

ՄԱՐԻԱՄԵԱՆ-ՅՈՎՆԱՆԵԱՆ
ՕՐԻՈՐԴԱՅ ԴՊՐՈՑԻ ՀՈԳԱԲԱՐՁԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴԸ
յայտնում է ի գիտութիւն ծնողների եւ խնամակալների, որ դպրոցը մտնել ցանկացողներին ընդունելու թիւնը քննութիւնները նշանակված են փետրվարի 3-ին, 5-ին եւ 7-ին, առաւօտեան 9 ժամից սկսած:
Խնդրատուները կարող են դիմել դպրոցի տեսչին առաւօտեան 9 ժամից մինչեւ 1 ժամը կէսօրից յետոյ՝ դպրոցի շինութեան մէջ:
1—3

ԼՈՅՍ ՏԵՍԱԻ
ԼԷՕ
ՀԱՅԿԱԿԱՆ ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ
ՄԵՐ ԿԵԱՆՔԸ, ԳՐԱԿԱՆՈՒԹԻՒՆԸ ԱՆՑԵԱԼՈՒՄ
Հատոր առաջին—XVI—XVII դար
Գինն է 1 ՐՈՒՔԻ 50 ԿՕՊԵԿ
Մալուխն է Թիֆլիսում, «Մշակ» խմբագրատանը.
Օտարաբաղադրացիները դիմում են. Тифлисъ, редакция «Мшакъ».

ՈՒՍՈՒՄՆԱՐԱՆ ԵՒ ՊԱՆՈՒՅՆ
Ա. ՏԵՐ-ՅԱԿՈՎԵԱՆԻ
ՈՒՆԻ ՀԻՆԳ ԴԱՍԱՐԱՆ, ՈՐՈՒՔ ՈՒՍՄԱՆ ԵՐԱԳՐՈՎ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒՄ
ԵՆ ԳԻՄՆԱԶԻՍԻ ԵՒ ԲԵՆԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱՐԱՆՆԵՐԻ ՀԻՆԳ ԴԱՍԱՐԱՆՆԵՐԻՆ:
ԲԵՆԱԿԱՆՈՒՄ ԵՒ ՊԱՏԱՐԱՆՈՒՄ աշակերտներ գիմնազիայի, բէլական ուսումնարանի, կադետների կորպուսի մինչեւ հիմնական դասարան, նոյնպէս առեւտրական, երկրաչափական եւ այլ ուսումնարանների համար:
Առաջին բաժանմունքում երեխաները ընդունվում են առանց քննութեան:
Ուսումնարանում ուսուցանում են բարձրագոյն ուսում ստացած հմուտ մասնագէտ մանկավարժներ:
Նոյն տեղը ընդունվում են ուրիշ ուսումնարանների աշակերտներ թէ ապրիլի եւ թէ դասեր ուսանելու համար:
Հասցէն՝ Թիֆլիս, Գաւառական, № 11 (Երրորդ գիմնազիայի մօտ): 5—5

ОТКРЫТА ПОДПИСКА на 1901 ГОДЪ
(III годъ изданія)
НА ГАЗЕТУ
„НЕФТЯНОЕ ДѢЛО“
Издание Совѣта съѣзда нефтяпромышленниковъ въ Баку.
Выходитъ 2 раза въ мѣсяцъ по слѣдующей программѣ:
1. Указанія и распоряженія Правительства, касающіяся нефтяной промышленности. 2. Самостоятельныя статьи, посвященныя нефтяной промышленности и другимъ связаннымъ съ нею вопросамъ, каковы: судоходство, пути сообщенія, тарифы, кредитъ и т. п. 3. Хроника нефтяного дѣла: буреніе, добыча нефти, заводская ея переработка, вывозъ и торговля нефтяными продуктами. 4. Новості техники нефтяного дѣла. 5. Статистика нефтяного дѣла. 6. Обзоръ печати: свѣдѣнія и мнѣнія другихъ изданій по вопросамъ нефтяной промышленности и ихъ критическая оценка. 7. Корреспонденція и телеграммы изъ нефтяныхъ районовъ и центровъ нефтяной торговли. 8. Нефтяная биржа: цѣна на нефтяные продукты, состояніе рынковъ, акцій нефтяпромышленныхъ обществъ и общія биржевыя свѣдѣнія. 9. Положеніе, нужды и статистика рабочаго населенія и служащихъ бакинскаго промыслового района. 10. Неожастые случаи и пожары на нефтяныхъ промыслахъ, заводахъ, складахъ, станціяхъ, пристаняхъ, судахъ и повозкахъ. 11. Отчеты нефтяпромышленности и вопросамъ, имѣющимъ связь съ нею. 12. Библиографія: рецензіи о книгахъ и статьяхъ по нефтяной промышленности и вопросамъ, имѣющимъ связь съ нею. 13. Смѣсь: мелкія новості изъ нефтяного міра. 14. Отчеты о съѣздахъ нефтяпромышленниковъ съ правительственными и общественными учрежденіями. 15. Представительская дѣятельность Совѣта съѣзда нефтяпромышленниковъ: ходатайства, отзѣвы, мнѣнія и переписка Совѣта по вопросамъ: врачебное дѣло, народное образованіе, пути сообщенія, осушеніе промысловъ, пожарное дѣло, общественныя сооруженія, приходы и расходъ суммъ съѣзда и пр. 17. Объявленія о предметахъ, имѣющихъ связь съ нефтяной промышленностью.
Подписная цѣна съ доставкой: на годъ 10 р., на 6 мѣсяцевъ 6 р., на 3 мѣсяца 4 руб.
Подписка принимается въ г. Баку, въ редакціи, въ помѣщеніи Совѣта съѣзда нефтяпромышленниковъ
Объявленія принимаются тамъ-же.
Редакторъ П. О. Гукасовъ.
3—3

ԲԱՆԴԱԿԱԳՈՐԾ
Ա. Ն. Դ. Բ. Ե. Ա. Ս. Տ. Ե. Բ. Մ. Ա. Բ. Ո. Բ. Բ. Ա. Ն.
վերադառնալով արտասահմանից
ընդունում է պատուերկներ Երեւանում
իր արեւատանոցում: Հասցէն՝ Երևան, А. М. Теръ-Марукану.
(2.) 3—3

ՀԱՇՈՒՆԳԱՆՈՒԹԵԱՆ ԴԱՐՆԹԱՅԵՐԻ XII շրջան
ՆԻԿՈԼԱՅՈՍ ԱՐԱՆՆԱՆ
Հեղինակ Չեռնոսկի աւետարական եւ գործարանական հաշուապահութեան ՈՒՍՈՒՄՆԱՐԱՆԻ ՊԱՏԱՐԱՆՈՒՄ Ե
Սրկու սեռի անձանց՝ 4 ամսվայ ընթացքում հաշուապահութիւն գործնականապէս, երաշխատուելով, եւ եղած դէպքերում լանձն է առնում պաշտօնի առաջարկել:
ՊԱՐԱՊՈՒՆԵՔԻ ԱՐԱՆՆԱՆԵՐԻ ՆՆ
Ա) Կրկնակի խաղական հաշուապահութիւն ըստ ամենայն աւետարական ճիւղերի, հանդերձ նաւթային արդիւնաբերական եւ կերութիւն գործարանական հաշուետուութեան:
Բ) Աւետարական թուաբանութիւն:
Գ) Աւետարական նամակագրութիւն:
Դ) Աւետարական եւ մուրակների կանոնադրութիւն:
Ե) Կենդանութիւն եւ ամենակալած ձեռքերի ուղղելը:
Պարապոմեքները սկսվելու են 1901 թ.ի յունվարի 20-ից, ճաշից յետոյ, եւ պաշտօնաբար շարունակվելու են իւրաքանչիւր 2ՈՐՄ ամսից յետոյ:
Ի Բ. Ա. Ք. Ա. Ն. Դ. Բ. Ե. Ա. Ս. Տ. Ե. Բ. Մ. Ա. Բ. Ո. Բ. Ա. Ն. Ե. 60 ՐՈՒՔԻ Լ
Ցանկացողները թող դիմեն գրաւոր կամ անձամբ 3 ժամից մինչեւ 6 ժամ երեկոյան, Կ Ո Ւ Կ Ի Ս, Նիկոլայեւսկայա փողոց, սեփական տուն, № 46: (Николаевская ул. № 46):
Վերադառնալով հաշուապահութեան ձեռնարկը ծախվում է Թիֆլիսում, հեղինակի մօտ, եւ Ռուսաստանի բոլոր յայտնի գրաւաճառանոցներում: Գինն է 3 ր. 50 կոպէկ: Օտարաբաղադրացիները գրեթէ գնելու համար կարող են դիմել հեղինակին, առանց պատի ծախվաւրի:
12—15